ՀԱԼԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

ՀՈՎԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Հալածում են ինձ անցած օրերը,
Ներկա ժամերը հանգիստ չեն տալիս...[1]

Հովհ. Թումանյանը գրական ասպարեզ իջավ մեր ժողովրդի հազարամյա պատմության ամենածանր, ամենառողբերգական շրջանում, երբ թուրքական անլուր կոտորածների սարսափի տակ կենաց ու մահու պայքար մղող ժողովուրդը ճնշվեց ու ճմլվեց, երկատվեց ու զրկվեց բուն հայրենիքից: Նա խիստ դժգոհ էր իր ապրած ժամանակից, քանզի նոր դարաշրջանը իր հետ բերում էր նաև բարքերի անկում, մարդկային հարաբերությունների աղարտում, բարոյական արժեքների ոտնահարում: Ի տարբերություն կենդանական աշխարհի՝ մարդու հետ առնչվող արժեքների մեջ շարունակում էր ամենամեծ արժեքը մնալ բարոյականով առաջնորդվելու ապրելակերպը: Մարդկային բոլոր տեսակի հարաբերությունների համար բարոյականը մշտապես եղել ու մնում է ամենանրբազգաց չափանիշը՝ լինի առօրեական, միջանձնային, թե՛ քաղաքական ու ազգային: Թումանյանը սրտի ցավով նշում էր, որ կյանքը շեղվել է բնականոն հունից, ուստի հարկավոր է «բանտ դարձած» աշխարհում ելք փնտրել ազգի փրկության համար: «Երբ լավ մարդը օժտված է տաղանդով,– ասում էր Գյոթեն,– նա միշտ էլ կաշխատի աշխարհի բարօրության համար. լինի դա արվեստագետ, բնագետ, բանաստեղծ կամ ուրիշ մի բան»[2]: Թումանյանը, ամբողջովին գտնվելով «պատմության շրջապտույտում», աշխարհաքաղաքական տեղատվությունների ու մակընթացությունների հորձանուտում, չէր կարող իրեն երջանիկ զգալ, քանզի ամենուրեք լսում էր հուսահատ հառաչանք ու ողբաձայն աղաղակներ: Պատահական չէ, որ բանաստեղծն իրեն համարում էր «խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ», «խորտակված ու հոգնած մարդ»: «Կորուստների ու ավերի ժամանակ,– գրում էր Թումանյանը,– մարդ ավելի կարիք ունի ջերմ, մոտ մարդու: ... կարծում եք՝ ես կյանք եմ վայելել. կյանքս կռիվ է եղել ու տանջանք. ջահելությունս անցել է «դժվար ու ապարդյուն»[3]: 1889 թ. գրած «Մանկություն» բանաստեղծության մեջ 20-ամյա երիտասարդ պոետը տեսնում էր բռնություն, անարգված պատիվ, աղի արտասուք և անվերջ հալածանք: «Վերջին խոսք» բանաստեղծության մեջ արդեն գործածում է «հալածված» բառը, իսկ մեկ տարի հետո գրում է.

---

[1] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1988, էջ 202:*
[2] *Է ք ե ր մ ա ն. Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 372:*
[3] *Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 211:*

Իմ հայրենիքը տխուր է, տխուր...
Ուր աչք են դարձնում՝ տխուր, ավերակ,
Ամեն տեղ միայն, միայն ցավալուր,
Հեծության ձայներ, երկչոտ աղաղակ[4]*:*

Ա. Բլոկն ասել է, որ ռուս բանաստեղծների մեծությունը չափվում է «տառապանքի մասշտաբներով»[5]*: Նույնը վերաբերում է հայ գրողներին և առաջին հերթին՝ Թումանյանին, որի ապրած ժամանակը մարդու մեջ մեռցնում էր, մարում «և՛ հոգու ձգտում, և՛ սրտի ժպիտ»: Թումանյանն իր հոգու և սրտի մեջ կրում էր հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վշտի ամբողջ ծանրությունը և Հայկական հարցը համարում էր վայրենի կոտորածների ու կեղեքումների, հալածանքների ու գաղթականությունների հարց:*

Համաշխարհային քաղաքակրթության միջավայրում հայ ժողովրդի բացառիկ ողբերգական ու հերոսական ճակատագրի և հալածականության պատկերը տեսնում ենք այլ գրողների գործերում ևս: Ռաֆֆին, որ ժամանակին դարձել էր հայ երիտասարդության «մտքի տիրակալը», ցավով գրում էր, որ շատ անգամ հայոց այգիների հնձանները ապաստան են եղել անմեղ հալածվածների համար: Հովհ. Հովհաննիսյանը մտահոգված էր, որ «կհալածվենք, կտառապենք մենք երկար», իսկ աշուղ-բանաստեղծ Ջիվանին հույս ուներ.

Փորձանք, հալածանք և նեղություն ազգերի գլխից,
Ինչպես ճանապարհի քարավան, կուգան ու կերթան...[6]

Թումանյանին մշտապես զբաղեցնում էին մի շարք կարևոր հարցեր՝ ի՞նչ է իրենից ներկայացնում աշխարհը, և ինքը՝ մարդն ընդհանրապես, ի՞նչ օրինաչափություններով է ղեկավարվում մարդուն տրված աշխարհը, ո՞րն է մեր կյանքի իմաստը, ի՞նչն է բարին, ի՞նչը՝ չարը և այլն: Նա մեր ժողովրդի թշվառության պատճառներից մեկը համարում էր հալածականությունը, որն էլ դարձրել էր իր ստեղծագործության գլխավոր թեմաներից մեկը՝ ներառելով սոցիալական, քաղաքական ու հայրենասիրական մոտիվների ամբողջությունը: Զարմանալի չէ, որ այդ ցավալի երևույթին Թումանյանն անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի հենց առաջին տարիներից՝ թե՛ չափածո, թե՛ արձակ գործերում և թե՛ զանազան հոդվածներում ու ելույթներում: Թումանյանը հալածական ու տառապանք տեսած մարդ էր համարում Սայաթ-Նովային, Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Պ. Ադամյանին, նույնիսկ օտար գրականությունների հերոսներ Համլետին ու Մծիրիին, Օլեգին ու Շիլիոնի կալանավորին և ուրիշների: Նա արտակարգ սեր էր տածում Աբովյանի, մյուս մեծերի, հատկապես Նալբանդյանի

---

[4] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1969, էջ 27 (այսուհետև հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):*

[5] А. Б л о к, А. Б е л ы й. Диалог поэтов о России и революции. М., 1990, с. 434.

[6] *Ջ ի վ ա ն ի. Երգեր, առաջաբանը գրեց, տեքստը կազմեց և ծանոթագրեց Ավ. Սահակյան, Երևան, 1988, էջ 90:*

նկատմամբ, բարձր էր գնահատում ազգային նշանավոր գործչի հզոր կամքն ու կորովը, որոնց շնորհիվ նա կարողանում էր հաղթահարել կյանքի՝ անվերջ հանդիպող խոչընդոտները՝ դառնալով հայ գրականության և ազատագրական շարժման «ամենավառ, ամենապայծառ աստղերից մեկը»: Թումանյանը Նալբանդյանի կերպարում տեսնում էր մշտական հալածվածին, որը նույնիսկ հալածանքի մեջ էլ «վերացել է մեր կյանքի անձուկ ու վատ մթնոլորտից դեպի էն հավերժական բարձրությունը, որտեղից դենը էլ տեղ չկա լավ հոգիների համար»[7]:

Թումանյանի ստեղծագործություններում հալածականության արտացոլման խնդիրը առաջին անգամ զբաղեցրել է Դ. Դեմիրճյանին: 1933 թ., խոսելով Թումանյանի ստեղծագործության յուրահատկությունների մասին, Դեմիրճյանն անդրադառնում է մի կարևոր հարցի պարզաբանմանը. դա վերաբերում է, ինչպես ինքն է ասում, «ստեղծագործությանը և հոգեբանությանը». չէ՞ որ ստեղծագործությունը հենց ինքը բանաստեղծն է, իսկ «բանաստեղծը երևան է գալիս նախ իր խղճի ձայնով, իր երգով և ապա իր սրտակից ժամերի զրույցներով»[8]: Երկար տարիներ շփվելով և մոտիկից ճանաչելով մեծ բանաստեղծին՝ Դեմիրճյանը գտնում է, որ Թումանյանի բնավորության իշխող տրամադրությունը «լայտմոտիվը» «պերմանենտ» գանգատն էր իր հալածանքից, կյանքի պայմաններից ու դժվարություններից: Դեմիրճյանի խոսքը հաստատում է բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը. «Նրա (Թումանյանի – Հ. Ա.) պայծառ ժպիտը, վեհ ու հանգիստ բնավորությունը, զվարթ զրույցը թաքցնում էին իր վշտացած հոգին: Շատ բնորոշ է սրտի խորքից բխած բացականչությունը. «Դրամաների մեջ ավելի զարհուրելին չկա, քան մեծ հոգիների դրաման»[9]: Եվ ապա՝ «շատերը ինձ երջանիկ են կարծում, կյանքս հարթ ու հավասար, բայց ներքին փոթորկումներիս ու աղմուկներին շատ են անծանոթ. ոչ ոք ոչինչ չգիտե: Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել...»[10]:

Մի շարք ստեղծագործությունների և դրանց հերոսների օրինակով Դեմիրճյանը ցույց է տալիս, որ Թումանյանի «հալածանքի ոգին ներսիցն է», իսկ «կենտրոնական ֆիգուրաներն են»՝ ճակատագիրը, հալածանքը, զոհ-հերոսը[11]:

Դեմիրճյանը նույն հարցին անդրադառնում է նաև 1939 թ. գրած «Հովհ. Թումանյանի պոեզիան» հոդվածում, ուր մասնավորապես նշում է, որ բանաստեղծի պոեզիան ամբողջապես «հալածականության թախիծով է տոգորված, ողողված Թումանյանի լիրիկայից սկսած մինչև էպիկան և դա հնչում է բազմապիսի լարերի միջով»[12]:

Դեմիրճյանը «ներքին Թումանյան» ասելով նկատի ունի բանաստեղծի ոչ միայն աձնական վիշտն ու հարազատների կորուստը, այլև հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական այն ծանր վիճակը, որ նա ապրեց XIX դարավերջին և XX դա-

---

[7] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1969, էջ 252:*

[8] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. XII, Երևան, 1985, էջ 79:*

[9] *Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 48:*

[10] *Նույն տեղում, էջ 291:*

[11] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 79:*

[12] *Նույն տեղում, էջ 164:*

րի առաջին երկու տասնամյակներին[13]*: Թումանյանը համաժողովրդական ցավի ակունքը տեսնում էր անվերջ հալածանքների, տարագրության ու պանդխտության մեջ: «Իր արնակիցներուն դառն վիճակը և չարչարանքները,– գրում էր զորավար Անդրանիկը,– խլեցին իր խնդում ճակատեն ու աչքեն ժպիտն ու ծիծաղը, անթեղելով իր սրտին մեջ իր ցեղին ցավը»*[14]*:*

Դեմիրճյանի հոդվածից տասնամյակներ հետո գրականագետ Լ. Հախվերդյանը նույնպես անդրադարձավ այդ թեմային: «Թումանյանի աշխարհը» մենագրության մեջ Հախվերդյանը մատնանշում է, որ բանաստեղծի չափածո և արձակ բազմաթիվ գործերում գլխավոր թեմաներին զուգահեռ համակողմանիորեն զարգացվում է մի այլ կարևոր պրոբլեմ՝ հալածանքի ու մաքառման թեմա-գաղափարը՝ «խորապես հարազատ և՛ բանաստեղծի ապրած ժամանակին, և՛ իր ժողովրդի պատմական ճակատագրին, և՛ իր հոգեբանությանը»[15]*:*

Այդ նույն պատմական ժամանակաշրջանի ադետալի դեպքերը բանաստեղծի «վշտակիր սիրտը» լցնում են «հեծության հառաչանքներով», տխրության ու ցավի մեղեդիներով: Եթե հոգու անմարմին տխրությունը Տերյանի պոեզիայում արտահայտվում էր թախծալի երգի սիմվոլիկ կերպարի միջոցով և ստեղծում յուրահատուկ մթնոլորտ, ապա այն Թումանյանի ստեղծագործություններում թանձրանում, կերպավորվում և դառնում է անսահման չափեր ընդունող և ողջ բնությունն ընդգրկող ծովածավալ զգացում, հայոց «անդնդախոր ձորերը» լցնող «հեծության հառաչանք», որից «այրված սարում էլ ծաղիկ չի դալարում»:

«Հառաչանք» բառը, Լ. Հախվերդյանի դիպուկ բնորոշմամբ, Թումանյանի ստեղծագործության մեջ ամենից հաճախ հանդիպող բառ-պատկերներից է[16]*.*

Հայի չար բախտը ինձ ներքն բերավ
Բարձր Գուգարքի ծաղկոտ սարերից,
Իմ հոգին լըցրեց հառաչանք *ու ցավ,*
Տըխուր երգերի քընար տըվավ ինձ (հ. II, էջ 134):

Կամ՝

Բայց իմ սիրտը բըռնած են դեռ
Հուր հառաչանք*, սև գիշեր (հ. II, էջ 103):*

Բառի տեղին ընտրությունը խոսքին տալիս է դիպուկություն, թռիչք ու սլացք՝ երևույթը ճիշտ ներկայացնելու, մարդու զգացական, հոգեբանական վիճակը ճիշտ ըմբռնելու համար: «Բառը ոգի ունի, հարկավոր է գտնել այդ ոգին»[17]*,– գրել է Մոպասանը: Թումանյանի կողմից հաճախ գործածվող* վիշտ, թախիծ, հալածական, հառաչանք *և այլ բառերը բառ-ընդհանրացումներ են, բառ-խտացումներ, որոնք հուզական և իմաստային մեծ լիցք են պարունակում ու հանդես են գալիս*

[13] *Նույն տեղում, էջ 134:*
[14] *«Դրոշակ» (Թիֆլիս), 10. VIII. 1918:*
[15] *Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Թումանյանի աշխարհը, Երևան, 1966, էջ 196:*
[16] *Նույն տեղում, էջ 192:*
[17] Г и д е М о п а с с а н. Новеллы. М., 1964, с. 6.

որպես յուրահատուկ խորհրդանիշեր: Այդ թախիծը, հառաչանքն ու վիշտն ունեն զանազան աղբյուրներ, և, ինչպես Թումանյանն է գրում, այդ բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ գնում, և դա մեր հայկական աշխարհն է: Դրանք հորդում են Լոռվա հյուղերից, Արածանիի հովտից, Վանա բանտից, այսինքն՝ հայոց աշխարհի բոլոր կողմերից լսվում են անվերջ ճիչ, աղաղակ ու հառաչ և բանաստեղծի հոգին պղտորում այդ սարսափելի ձայներից:

Հալածում են ինձ անցած օրերը,
Ներկա ժամերը հանգիստ չեն տալիս,
... բայց գնում եմ ես հալածված նորից...
Ինչպես եղջերու (հ. II, էջ 168):

Ասվածը վերաբերում է նաև հալածական *բառին. հալածական է մի ողջ ժողովուրդ, հալածական են փոքրիկ Մարոն ու Լոռեցի Սաքոն, Անուշն ու Սարոն, Ալեքն ու Մեհեն, Գիքորն ու որբ երեխաները, նույնիսկ՝ կենդանիները:*

Այդպիսի բառ-պատկեր կամ սիմվոլիկ պատկեր է նաև գիշերը*: Եթե ռոմանտիկ Մեծարենցը գիշերային պատկերների միջոցով ներկայացնում է խաղաղ պայմաններում մտորելու, երազելու գեղեցիկ պահերը, և գիշերին հաջորդում է բաղձալի այգաբացը, իսկ Տերյանի ստեղծագործություններում լսվում են անուրջի և հուսաբեկ միայնության ձայները, և քնարական հերոսը չի գտնում որոնած լույսը, ապա ռեալիստ Թումանյանը մի շարք գործերում՝ «Գիշերը բազմեց լեռների վրա», «Երկար գիշերներ», «Տխո՛ւր գիշեր, տրտո՛ւմ գիշեր», «Գիշեր» և այլն, կոնկրետ պատկերներով ցույց է տալիս, որ գիշերներն անգամ հանգիստ չեն տալիս, որովհետև անվերջ լսվում են ծանր տնքոցներ ու լացի ձայներ, ժողովրդի զավակները դարձել են հալածական և կիսամահ չարչարվում են մոլոր ճանապարհներին.*

Սակայն գիշերն *այն հեգ երկրում*
Հանգստության փոխանակ
Ահ ու սարսափ է միշտ բերում,
Գաղտնի հարված ու տանջանք (հ. II, էջ 141):

«Դեպի մեծ կյանքը» հոդվածում Թումանյանը ձգտում է բացատրել մեր գրականության գլխավոր թեմաներից մեկի՝ արյան ու կոտորածի սկզբնավորումն ու ծավալումը: Նա գրում է. «Մեր կյանքը դժոխք են դարձրել նրանք (օտար բռնակալները – Հ. Ա.), մեզ համար մարդուն անվայել ստոր վիճակ են ստեղծել ու ստոր խնդիրներ, մեր ուշքն ու միտքն էլ հետը ցած տարել: Դառնացրել են մեր հոգին... ստիպել են երգել «Արյան երգեր»[18]:

Այդ մտահոգությունների արտահայտություններից է նաև հետևյալ քառատողը.

[18] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 229:*

Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ,
Ո՞ւմ մոտ գնաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ,
Ո՞նց մոռանաս էս աշխարհը արյունոտ,
Երգ ես լրսում, լրսածդ երգերը արյունոտ[19]*:*

Կյանքի տարբեր հատվածներում բանաստեղծը խիստ դժգոհում էր ստեղծագործական ոգևորության բացակայությունից կամ պակասից՝ ասելով, որ ինքը «խանգարվել է», իսկ հայ գրականությունը դարձել է «խանգարված ժողովրդի խանգարված գրականություն»: Այդ վիճակից դուրս գալու ելքը նա տեսնում էր նաև Կովկասի հայոց գրական ընկերություն ստեղծելու մեջ: 1912 թ. գրում էր. «Ընկերությունը պետք է հաստատուն կանգնի, մեծանա, ուժեղանա, հարազատ ու տաք օջախ դառնա հայոց հալածական գրականության համար, ամուր նեցուկ ու պաշտպան դառնա հայոց խանգարված գրողի համար և բարձր պատվար՝ ամեն չարության ու հալածանքի հանդեպ»[20]*:*

Թումանյանի նշած «խանգարվածությունը» չխանգարեց, որ շարունակելով անցյալի ավանդույթները, հայ գրականությունը «ցավի ու ողբի», վշտի ու տառապանքի մասին խոսելուց դառնա խղճի և արդարության մունետիկ, բարության ու ազնվության շեփորահար: Եվ քանի որ ուրիշի ցավը տեսնելու անզուգական աչք ու սիրտ ուներ բանաստեղծը, ուստի նրա մտահոգությունների գլխավոր առարկան այդ «ուրիշն» էր՝ մարդը իր հոգեկան ու ֆիզիկական դրամայով, որն այլ կերպ արտահայտվում էր ժողովրդի և հայրենիքի հալածական վիճակի ու հառաչանքի գեղարվեստական պատկերներով: Թումանյանը մշտապես հիշեցնում էր, որ եթե մարդն է հասարակության ու բնության գլխավոր առարկան, ուրեմն նա պետք է ապրի ու գոյատևի բնության նման պարզ ու գեղեցիկ, և ոչ մի խոչընդոտ չպետք է արգելի նրա իմաստուն գոյությունը: Նա աստվածացնում էր մարդուն և նրա մեջ էր փնտրում լուսավորն ու բարին («Ա՜խ, երանի՛, ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ»): Բանաստեղծը յուրովի էր արձագանքում Շատոբրիանի այն մտքին, թե իսկական աստծուն գտնելու համար հարկավոր է որոնել իսկական մարդուն[21]*: Սակայն կյանքն այլ ընթացք էր հաղորդել մարդու գոյությանն ու կենսակերպին: Թումանյանը ցավում էր, որ մարդու մեջ կորչում է մարդկայինը, որ ասպարեզ են եկել «չնչին մարդուկներ» և դառնացրել կյանքի երազը (հ. II, էջ 152):*

1880-ական թվականների վերջերից Թումանյանն անդրադառնում է «մարդհրեշների» «գետնաքարշ և չարախնդում» գործունեությանը, որոնց պատճառով հազարավոր անմեղ հոգիներ հալածվում են անսանձ չար կրքերից, իսկ հայոց երկնակամարում և հալածական դարձած հայրենիքում չկա անդորր ու խաղաղություն («Վերջին խոսք», հ. II, 106):

Թումանյանի ստեղծագործության սոցիալական ու քաղաքական պոեզիան ամբողջովին թաթախված է հալածանքի ու հառաչանքի դառն արցունքներով.

---

[19] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1990, էջ 73:*

[20] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 158:*

[21] “Новый мир” (Москва), 1984, № 7, с. 251.

նրա հոգու երկինքը մթնում է մշտական հալածանքներից, և նույնիսկ գիշերները, երազում, փախչում է չար թշնամիներից.

Հացրս նախատինքն եղավ օտարի,
Հանգիստրս ճամփում հալածանքների,
Լրսեցի ցերեկն աղաղակ ու բոթ,
Գիշերը *լացի մինչև առավոտ (հ. II, էջ 151):*

Հայրենիքի հավաքական պատկերի մասին Թումանյանի անհանգիստ հոգու մտորումները, սկսած «Երկու սև ամպ» բանաստեղծությունից, դրանից առաջ և հետո գրած բանաստեղծություններից, պոեմներից ու բալլադներից մինչև քառյակները, հանգում են ճշմարտության որոնմանը, անձնական վշտի պատկերումից գնում դեպի մեղքեր չգործած իր ժողովրդի հալածականության պատճառների քննությունը:

Չեզ ո՞վ հալածեց, ո՞ր դաժան քամին,
Ո՞ր չար թըշնամին –
Շընչում է մըրրիկն իմ անուշ հովտում,
Թոշնել են վաղուց ծաղկունքն իմ սիրած.
Չըմեռն է այնտեղ, ձմեռ՝ իմ սըրտում,
Ծաղիկ ու ցընորք - բոլորը կորած... (հ. II, էջ 159):

Հայրենի երկրից եկող անամոք վիշտը հանգիստ չի տալիս բանաստեղծին և ընդհանուրի ցավով մտահոգ թշվառության ու թախծի երգիչը ամենուրեք տեսնում է տխուր ավերակներ և «ցավալուր հեծության ձայներ»: «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Մեր ուխտը» և մի շարք այլ բանաստեղծություններում Թումանյանը տալիս է ոչ միայն հայրենիքի հալածական վիճակի, այլև ժողովրդի անցած դարավոր դժվարին ճանապարհի գեղարվեստական պատկերը, նրա պատմությունն ու այդ պատմության փիլիսոփայությունը: Այդտեղ բանաստեղծը ներկայացնում է մի շարք սիմվոլներ՝ լույս, հույս, կանաչ, սուգ, դժար *և այլն, որոնց միջոցով վեր է հանում ժողովրդի անդուլ ընթացքը դեպի լույս ու փրկություն: Նման սիմվոլները այլաբանություններ կամ լոկ նշաններ չեն, այլև ներկայացնում են մարդկային գիտակցության մեջ մասամբ տեղավորված բովանդակային կերպարներ:*

Թումանյանի ստեղծագործություններում որոշակի միասնություն են կազմում հալածանքն ու մաքառումը: *Կյանքը կազմված է հենց այդ երկու՝ իրար հակասող, երբեմն էլ լրացնող բաղադրամասերից: Եթե գոյություն ունի հալածանք, ուրեմն անհրաժեշտ է մաքառել ամբողջ կարողությամբ: Մաքառողի տխուր ճակատագիրը, դժբախտաբար, բաժին էր ընկել և՛ «զրկված ու զարկված» հայրենիքի բնիկ զավակներին, և՛ աշխարհով մեկ ցիրուցան եղած հայորդիներին: «Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը» հոդվածում բանաստեղծը ցավով է նշում, որ հայ ժողովրդին «անդադար հոշոտում ու ծվատում էին ոչ թե*

միայն վաչկատուն ցեղերն ու ժողովուրդները Արևելքի, այլև հենց էն պետությունները՝ զրադաշտական թե իսլամ»[22]:

Դեռևս պատանեկության տարիներին գրած «Օրորք» բանաստեղծության մեջ Թումանյանը տալիս է «աչքերն արցունք, ինքը լուռ» հարազատ ժողովրդի կյանքի տխուր պատկերը, երբ քանդեցին նրա տան ամուր հիմքերը և մի ցավագին սուր մխեցին «մեր սրտի մեջ»: Հայ ժողովուրդը՝

Եվ այն օրից մինչ այսօր
Տկլոր, բոբիկ ու քաղցած
Թափառում է սար ու ձոր
Անգութներից հալածված[23]:

Բանաստեղծի սիրտը ցավում է հալածական պանդուխտ դարձած յուրաքանչյուր հայի համար, որովհետև, ինչպես ինքն էր ասում, հայրենիքից հեռացած և օտար երկրներում դեգերող պանդուխտները դառնում են «խորտակված մարդիկ» և «սառն ու օտար աշխարհում» կորչում ինչպես կաթիլը ջրի», ձուլվում կամ անհետանում առանց հուշ ու հիշատակի.

Մեռավ պանդուխտն, բարյավ մնաք...
Գիտեք, որքան ձեզնից թաքուն
Խեղճը հեծեց, ողբաց մենակ...
Գեթ ողորմի տվեք հոգուն... (հ. II, էջ 31):

Պանդխտությունն իբրև երևույթ ազգային ողբերգության հետևանք էր, հալածականության յուրահատուկ դրսևորում, որ եղել ու առայսօր մնում է մեր ժողովրդի մշտամորմոք ցավը, նրա սրտի ու մտքի տվայտանքը: Դեռևս 1890-ական թվականներին Թումանյանն անդրադարձավ պանդխտության պրոբլեմին: Համիդյան ջարդերի պատճառով պանդխտության նոր ալիք առաջացավ և հալածական դարձրեց տասնյակ հազարավոր հայերի: Քաղցի ու հիվանդության ճիրաններում հալածված, հոգնած ու հուսաբեկ գաղթականները մոլորվում էին անգութ աշխարհի սև ճամփաներում, իսկ Աստված դարձյալ անտարբեր էր հալածական ժողովրդի նկատմամբ.

Մենք հալածված ենք առանց մեղքերի
Եվ չի պաշտպանում մեր դատը ոչ-ոք[24]:

Հալածական մարդու գոյության խնդիրը Թումանյանին զբաղեցրել է նաև հայոց ու արևելյան ժողովրդական լեգենդները, ավանդությունները և զրույցները մշակելիս: Դրանք իրենց համադրական բնույթով տեղադրվում են մի ընդհանուր անվան տակ և կոչվում են բալլադներ, որոնց բովանդակության ու կառուց-

---

[22] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 139:*
[23] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. I, էջ 314:*
[24] *Նույն տեղում, էջ 72:*

վածքի մեջ զուգահեռ հանդես են գալիս իրականը և ֆանտաստիկը, պայմանականն ու այլաբանականը: Այդ բալլադներն իրենց թեմատիկ-գաղափարական բովանդակությամբ արծարծում են քաղաքական, տնտեսական և առօրեական-կենցաղային խնդիրներ՝ ցուցադրելով գեղարվեստական մշակման ու ընդհանրացումներ կատարելու Թումանյանի մեծ վարպետությունը:

Սկսած 1880-ական թվականներին գրած «Շունն ու կատուն» բալլադից մինչև «Թագավորն ու չարչին», Թումանյանը հիմնականում այլաբանորեն ներկայացնում է կյանքի ճշմարիտ, իրական պատկերներ, արտահայտում արդարության, ազատամտության ու հավասարության, բարու և չարի պայքարի գաղափարներ, դատապարտում ամեն տեսակ բռնություն ու չարագործություն: Այդ ամենի շնորհիվ բալլադների մի մասը կարելի է անվանել «փոքրիկ դրամաներ»՝ գործող անձանց խոսքի, բնավորությունների կենդանի երանգների, գործողություններով և դրամատիզմով հագեցած լինելու շնորհիվ:

Բանաստեղծի կարծիքով հալածականության զոհ են դառնում ոչ միայն մարդիկ ու ժողովուրդներ, այլև անմեղ կենդանիները: Հալածական են կատուն («Փիսիկի գանգատը»), կաքավը («Կաքավի ողբը»), սոխակը («Սոխակի վիշտը»), կկուն («Չարի վերջը»), եղջերուն («Եղջերուի մահը») և այլն:

Թումանյանն արժևորում էր ժողովրդական բանահյուսությունից եկած այն իմաստնությունը, որ չարից, չարությունից ու հալածանքից ազատվելու փրկարար միջոցներից մեկը թևավոր դառնալն ու թռչելն է: Այս կարևոր գաղափարը նա գեղարվեստորեն մարմնավորել է «Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», «Որբը», «Աղավնու վանքը» և այլ բալլադներում: Ընտանեկան կապանքների մեջ գտնվող նահապետական գյուղացու չխոսկան հարսի իրավազուրկ վիճակի և այդ վիճակից դուրս գալու ելքը թռչուն դառնալն է և գերությունից ազատվելը («Անիծած հարսը»), չար ու անհոգի խորթ մոր կողմից հալածական դարձած 5-6 տարեկան երեխաների փրկության միջոցը դարձյալ թևավոր դառնալն է: Աստված լսում է փոքրիկ որբերի աղեկտուր կանչերը և գթոտ ձայնով շշնջում.

– Ահա ձեզ թևե՛ր, սիրուն երեխեք,
Թռչուններ դառեք, թռռած ման եկեք,
Որ էլ չըտեսնի ձեզ ձեր խորթ մերը...[25]

Թուրք ասկյարների կողմից հալածվում է Որբ թռչուն դարձած քաջ պատանի Սահակի գեղանի քույրը («Որբը»), աղավնիներ են դառնում և գազան Լենկթեմուրի սրից ազատվում հազարավոր գերիներ («Աղավնու վանքը»), իսկ Զուղայի ամբողջ բնակչությունը տեղահան է լինում Շահ-Աբասի կողմից («Թագավորն ու չարչին»): Հատկապես վերջին բալլադն ունի պատմական որոշակի հիմք, որ շարադրված է ուշ միջնադարի պատմիչներ Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Սարկավագի գրքերում (տե՛ս հ. I, էջ 416): Խոսքը վերաբերում է 1604 թ. Զուղայի գաղթին, երբ մի ամբողջ քաղաք տեղահանվեց ու քշվեց Պարսկաստան: Թու-

---

[25] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1969, էջ 244 (այսուհետև հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):*

մանյանը ներկայացնում է ահավոր բռնագաղթը, ժողովրդի տառապանքն ու տանջանքը, հալածվելը հարազատ վայրերից.

Եկավ վարար հեղեղի՛ պես,
Ջարկեց մեր շեն, մեր լի Ջուղան,
Ոչ աստրծուն նայեց, ոչ մեզ,
Սրրբեց բերավ ողջ տեղահան (հ. I, 309):

1917 թ. գրած բալլադում Թումանյանն այդ ողբերգությունը ներքուստ կապում է մեծ եղեռնի հետ և արծարծում է ոչ միայն ազգային, այլև համաշխարհային խնդիրներ, դատապարտում ամեն տեսակ բռնություն: Բալլադում երկու անգամ կրկնվում է այդ կարևոր միտքը.

Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր... (հ. I, 310):

Նշված և այլ գործերում Թումանյանը շատ քիչ է միջամտում ու հալածականության տխուր պատկերը հիմնականում ներկայացնում է գործողությունների միջոցով: Բայական խոսքի մասի տարբեր եղանակների ու ժամանակների հմուտ կիրառմամբ բանաստեղծը շարժում և ընթացք է հաղորդում տվյալ ստեղծագործության սյուժեին, դրանով նպաստում վերջինիս զարգացմանն ու ծավալմանը: «Թումանյան գործողություն մտցուց հայ բանաստեղծության մեջ»[26],– իրավացիորեն գրում էր Ա. Չոպանյանը:

Անհատի և ժողովրդի հալածականության տխուր պատկերը խոր արտահայտություն է գտել նաև պոեմներում: Մանկական տարիների հիշողությունները բանաստեղծի գրչի տակ դարձել են գեղարվեստական անմոռաց տողեր և ամփոփվել «Մարոն», «Անուշ», «Լոռեցի Սաքոն» և այլ պոեմներում: «Մարոն» պոեմում Թումանյանը ցույց է տալիս, որ մանկահասակ աղջիկը հալածական է դարձել ժամանակի հետամնաց բարքերի ու սովորույթների պատճառով: Անչափահաս երեխան մեն-մենակ թափառում է հանդերում կամ պատսպարվում օտարների տներում, որովհետև «մրոտել» էր հայրական օջախի պատիվը.

Ու հալածված իր հորից,
Փախած չոբան Կարոյից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով (հ. I, 27):

Բավական ժամանակ աղջնակը փորձում է մաքառել անխոհեմ ծնողների ճակատագրական սխալի դեմ, սակայն անզոր էին նրա ուժերը, և նա ելքը գտնում է ինքնասպանության մեջ:

---

[26] *Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Երկեր, Երևան, 1988, էջ 730:*

Թումանյանին մշտապես մտահոգում էր տառապանքի ու հալածանքի մեջ գտնվող մարդու գոյության խնդիրը: «Մարդկային կյանքում մարդն է ամեն բան, և ամեն գործ ու գործունեություն բխում է նրանից»[27],– գրում է Թումանյանը և ցավում, որ մարդու մեջ կորչում է մարդկայինը, վերանում են փոխադարձ սիրո անկաշառ զգացումը, նվիրվածությունը, լիարժեք կյանքով ապրելու հնարավորությունը: «Լուռ վշտի հետ» տարիներ ապրող պոետը ցավում էր, որ խավարի ու տգիտության մեջ և սոցիալական ծանր վիճակում գտնվող գյուղացին անվերջ հալածվում է. մի կողմից տանուտերն ու քահանան, մյուս կողմից՝ իշխանավորն ու թավադը հանգիստ չեն տալիս նրան:

«Հառաչանք» պոեմի գլխավոր կերպարը «տառապանքի փորձ ունեցող» և տասնամյակների ընթացքում իմաստնացած ծերունին է, որ մտածում է ոչ միայն «մի կտոր չոր հացի», այլև մարդկային խաթարված հարաբերությունների, իր բարձր կոչումից մարդու անկման, մարդկայնության կորստի մասին: Նրա մտապատկերում կենդանանում են «դաչաղ» դարձած հալածական երիտասարդները, Սիբիր աքսորված չորան Չատին, անցյալի նահապետական մաքուր ու ազնիվ բարքերը, և գալիս է այն եզրակացության, որ նման ձևով այլևս ապրել չի լինի: Կրոնասեր և աստվածավախ ծերունու համբերության բաժակը լցվել է, և նա ըմբոստանում է Աստծու սահմանած օրենքի դեմ, որովհետև՝

Դարձել է աշխարհքն, ա՛խպեր, առ ու փախ,
Մերը դարձել սուր ու ջուրը - արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,
Վայը եկել է տարել տկարին (հ. I, 68):

XX դարի նշանավոր մտածող և հումանիստ Ա. Շվեյցերը գտնում էր, որ եվրոպական մշակույթը խոր ճգնաժամի մեջ է, քանի որ հոգևորի նկատմամբ գերիշխում է նյութականը[28]: Բարոյականության հիմնական սկզբունքն այն է, որ անհրաժեշտ է հավասար վերաբերմունք ունենալ մարդկանց հանդեպ, այլապես հարցականի տակ կդրվեն կյանքի պահպանումն ու զարգացումը, իսկ չարությունը կոչնչացնի այն:

Թումանյանը պոեմում տալիս է հենց այդ բարոյական արժեքների ոչնչացման պատճառները, շեշտում, որ մասնատիրական հարաբերությունները խաթարել են ամեն ինչ.

Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի... (հ. I, 73):

Ծերունու խոսքի միջոցով բանաստեղծը բնութագրում է ժամանակի հասարակական կյանքի խոցելի կողմերը, մասնավորից գնում դեպի ընդհանուրը, դեպի համամարդկայինը, ցույց տալիս, որ նման անարդարությունների պատճառով աշխատավոր մարդիկ դարձել են հալածական.

---

[27] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 256:*

[28] *Տե՛ս* А. Ш в е й ц е р. Благоговение перед жизнью. М., 1992, с. 218.

Երեկ իրիկուն էդ կողքիդ սնից...
Կախ էին արած երեք հրասյուն (հ. I, էջ 74):

Է՜, մի՛ խոսեցնի, Աստված կըսիրես,
Թե չէ մի դաչաղ կըդառնամ ես էլ... (հ. I, էջ 72):

Թումանյանն իր ստեղծագործություններում ուշադրություն է դարձնում նաև մարդու հոգեզգացական աշխարհում գոյություն ունեցող մի այնպիսի երևույթի բացահայտմանն ու պատկերմանը, ինչպիսին է վախը: Բանաստեղծի ժամանակակից Վրեն Տաշրացին (Հովհաննես Վերանյան) վախի առաջացման պատճառների մասին գրում է. «Վախը, վախկոտությունը մեր ժողովրդի կյանքի մեջ մեծ տեղ է բռնում: Երեխայությունից գյուղացին սնվում է հեքիաթներով, առասպելներով, սնոտիապաշտություններով, որոնք լիքն են լինում արհավիրքներով և սարսափելի տեսարաններով: Այդ պատմությունները ծնուցանում են նրա մեջ երկյուղ, սարսափ: Գիշեր ժամանակ նա աներկյուղ ման գալ չի կարող, որովհետև վախենում է սատանաներից, դևերից և չարքերից: ... Գիշերը մի բվի ձայն գյուղացու համար դժոխքից ելած ձայն է: Այդ ժամանակ քարերն էլ ոտ են լինում և սև-սև ուրվականների պես երևում: Մի խոսքով, վախը իր շատ զոհերն է տանում մեր ժողովրդի միջից»[29]:

Թումանյանը «Լոռեցի Սաքոն» պոեմի սկզբնամասում ստեղծում է Լոռվա բնության հզոր պատկերը՝ ահռելի ձորը գիշեր ժամանակ: Դրանով բանաստեղծը ձգտում է համոզիչ դարձնել մարդկային հոգեբանության մի բարդ երևույթ՝ վախի ազդեցությունը մարդու գիտակցության ու զգացմունքի վրա, դրա նախապատրաստությունն ու դրդապատճառները: Թումանյանն ստեղծում է տիպական հանգամանքներ, որոնք դառնում են հոգեբանական կարևոր խթան մենակ մնացած հովվի մտորումների հետ կապված հետագա գործողությունների զարգացման ընթացքը ցույց տալու համար:

Ֆիզիկապես ուժեղ լեռների իգիթը, որի հզոր ուժին ոչինչ չէր դիմանա, այժմ ընկրկում է բնության մեջ գոյություն չունեցող անհայտ ոգիների առջև, որովհետև մանկության տարիներին տատից լսած պատմությունները չարքերի մասին այդ պահին «արթնացել» ու «կենդանություն» են առել նրա երևակայության մեջ: Նահապետական գյուղացու պատկերացմամբ բնության մեջ գոյություն ունեն զանազան ոգիներ ու քաջքեր, գիշերով մութ անձավներից դուրս են գալիս և հոպիտ ձայներով կանչում մարդկանց:

Սաքոյի լուռ մենախոսությունը նրա մտապատկերում առաջացնում է զանազան տեսիլներ, որոնց իրականության տեղ ընդունելով՝ հավասարակշռությունից դուրս է գալիս աժդահա հովիվը: Սաքոն երկար ժամանակ պայքարում է այդ տեսիլների դեմ, ձգտում է ազատվել դրանց մոգական ներգործությունից, սակայն որքան մաքառումը մեծանում է, այնքան նրա գիտակցության վրա տեսանելի է դառնում չարքերի «ներկայությունը»: Սաքոյի մթագնած երևակայութ-

[29] *Վ. Տ ա շ ր ա ց ի. Ժողովրդական աղոթքներ.– «Նոր դար», 1887, էջ 126:*

յան մեջ չարքերն արդեն դուրս են եկել մութ անձավներից և հետապնդում են նրան.

Չարքերը ընկած նրրա ետևից,
Հերարձակ խրմբով, ճիչ-աղաղակով՝
Հասնում են մեջքին, բրռնում են թևից,
Զարկում են, զարկո՛ւմ օձի մրտրակով... (հ. I, էջ 35):

Չանդրադառնանք Սաքոյի խելագարության նկարագրության առթիվ հայտնված տարակարծություններին, միայն նշենք, որ նախապաշարված հսկա հովվի խելագարությունը միանգամայն համոզիչ է. Սաքոն հալածվում է երևակայական չարքերից և փախչում՝ ազատվելու նրանց հետապնդումից.

– Բրռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար... (հ. I, էջ 36):

Հալածականության պատկերը ցայտուն երևում է նաև «Անուշ» պոեմում: Մինչև ձմռան գիշերվա հարսանիքը ոչ ոք չէր մտածում մտերիմ ընկերների տարաձայնության կամ թշնամանքի մասին, որովհետև նման առիթ չկար: Միայն հարսանիքից հետո են թշնամի դառնում «ախպեր տղերքը»: Սարոն դառնում է հալածական և ընկնում սարերը.

Ու ման է գալիս սարերը ընկած
Սարոն փախցրած եղջերվի նրման,
Օրհասն առաջին, գընդակն ետևից,
Հանդերը՝ դրժոխք, ընկերը՝ դուշման (հ. I, էջ 931):

Սիրո և ատելության բախումից ծնված վրիժառությունը պայմանավորում են հալածականության հետագա սաստկացումը: Անուշին փախցնելուց հետո արդեն հալածվում են երկու սիրահարները, որոնց հանդեպ հալածանքը դառնում է ավելի կատաղի ու խմբային.

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տրվեց՝
Չորան Սարոյին գրտնելու համար,
Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց (հ. I, էջ 92):

Պոեմում Սարոն հանդես է գալիս որպես ողբերգական կերպար: Նա հալածական է դառնում ոչ թե գործած իրական հանցանքի, այլ «հնոց ադաթը» բնազդաբար խախտելու պատճառով: Նա մաքառում է ճակատագրի ու հալածանքի դեմ, ձգտում է պաշտպանել իր նվիրական սերը, սակայն այդ պայքարը երկար չի տևում և չէր էլ կարող տևել, որովհետև նման վիճակից նրան ոչ ոք չէր կարող փրկել: Հոգեկան ծանր տագնապի մեջ հալածական երիտասարդ սիրահարը այլ ելք չունի, բացի այն, որ օգնություն է հայցում միակ փրկարար ուժից՝ բնությունից՝ այն համարելով իրեն վշտակից: Թումանյանի ստեղծագործության գեղագի-

տական-փիլիսոփայական համակարգում բնությունը հանդես է գալիս որպես գործող անձ, որպես տառապյալ հոգիների սփոփանք: Բանաստեղծի կողմից բնության շնչավորումը (անտրոպոմորֆիզմ) դառնում է վիճակ, ճակատագիր, հարազատ օջախ ու մտերիմ մարդ: Այդ մասին է արձակագիր Կ. Զարյանի հետևյալ խոսքը. «...հայ մարդը և հայ բնությունը իրենց ներքին զարգացման կարողությունը առնում են նույն անբաժանելի և միասնական աղբյուրից, որ Ոգի է...»[30]:

Պոեմում իր ամբողջ վեհությամբ դրսևորվել է Թումանյանի գեղագիտական իդեալը մաքուր, անարատ սիրո մասին՝ միահյուսված կյանքի իմաստի բացահայտմանը, գեղեցիկի ու վեհի հաստատմանը: Իդեալն իր մեջ ամփոփում է հեղինակին բնորոշ էական սկզբունքներ կրող հատկանիշներ, որոնց միջոցով ցուցադրվում է կյանքն իր արժանիքներով ու թերություններով, օգնում է տեսնել բարին ու ազնիվը: Թումանյանն իր ստեղծագործությամբ հաստատում է Բելինսկու այն խոսքը, թե իդեալի ամբողջ ուժը նրա մարդասիրության մեջ է, որն ստեղծում է կատարելություն և բացարձակ ներդաշնակություն[31]:

Թումանյանի մարդասիրությունը հանգում է մարդկային կյանքի կործանումը ժխտելուն: Նա պոեմում էպիկական հզոր ուժով ցույց է տալիս, որ ամեն մի սպանություն, մարդու ամեն մի կորուստ խախտում է բնության ու մարդկային հասարակության ներդաշնակությունը և ներկայացնում հալածականության հակառակ երեսը՝ հալածվողի դժբախտությունը չի կարող երջանկություն պարգևել հալածողին: Անվերջ տառապանքի ու մտորումների մեջ գտնվող Սարոյի հետ միասին ուրախ չէ նաև Մոսին, որովհետև պարտադրված արարքը նրան հանգստություն չի բերում.

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր,
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր (հ. I, էջ 96):

Հալածական Սարոն արդեն գտել է իր «հանգստությունը», սակայն անմնացորդ սիրո երկրորդ վկան՝ Անուշն այլևս չի կարող ապրել ու «նոր սեր անել»: Այս անգամ Անուշին «հալածում է» սիրած տղայի անշուք գերեզմանը.

---

[30] *Կ. Զ ա ր յ ա ն. Միացյալ նահանգներ, Երևան, 2002, էջ 126: Թեև այստեղ խոսքը միայն հայ մարդու և հայ բնության մասին է, սակայն նույնը կա նաև այլ ժողովուրդների մոտ, և մարդն ընդհանրապես բնության մաս է:*

[31] *Տե՛ս* В. Б е л и н с к и й. Собрание сочинений, т. 3. М., 1948, с. 466.

Նրրա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Չեն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված (հ. I, էջ 97):

Անուշի աչքում հանկարծակի փոխվում են աշխարհն ու մարդիկ, դատարկվում է ամեն բան, և Սարոյից հետո ապրելը դառնում է անիմաստ:

Հալածականության երևույթը Թումանյանի ստեղծագործության բաղկացուցիչ մասն է, որն արտահայտվել է նաև «Հին կռիվը», «Մեհրի», «Ալեք», «Թմկաբերդի առումը» պոեմներում, «Փարվանա» բալլադում և այլ գործերում:

ИДЕЯ УГНЕТЕННОСТИ В ПОЭЗИИ ОВАНЕСА ТУМАНЯНА

ОВИК АЙВАЗЯН

Р е з ю м е

Ов. Туманян считал угнетение причиной отверженности армянского народа. Это стало важнейшей темой в творчестве армянского поэта, вобравшей в себя социальные, политические и патриотические мотивы. Тема угнетенности нашла отражение в стихотворениях, поэмах, народных легендах и балладах, обработанных великим армянским поэтом.

THE IDEA OF OPPRESSION IN HOVHANNES TOUMANYAN'S POETRY

HOVIK AYVAZYAN

S u m m a r y

Hovh. Toumanyan stated that one of the reasons of misery of the Armenian people was violence against the nation. It is always supposed to be the most significant topic in the creations of the national poet and includes some social, political and patriotic motivations. The topic of violence is entirely reflected in the poems, legends and ballads worked out by the great Armenian poet.